

Պարույր Հայրիկյան

# ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ԵՐԳԵՐ

Նուիրում եմ զինակցիս, հայրենիքի նուիրյալ Մովսես Գորգիսյանի հիշատակին:

# Պարույր Հայրիկյան

# ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ԵՐԳԵՐ

ԵՐԳԵՐ
ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ



ԳԴՄ 84Հ7-5
Հ 305

Պ. Ա. ՀԱՅՐԻԿՅԱՆ
Ազատության երգեր: Երգեր, բանաստեղծություններ.- Եր.: «ԱԻՄ», 1996թ., 32 էջ:

Պարույր Հայրիկյանը մեզ ծանոթ է որպես մեր ժամանակների մեծ քաղաքական գործիչ՝ ազգային-ազատագրական պայքարի առաջնորդ, անկախության պայքարի առաջամարտիկ եւ կազմակերպիչ, անհատի եւ ազգի ինքնորոշման իրավունքի իրականացման ռահվիրա, անկախության հանրաքվեի, ազգային բանակի ու սահմանադրության գաղափարների սերմնացան ու մշակ:

Այս գրքույկով մեզ է ներկայանում մտավորական՝ երգահան եւ բանաստեղծ Պարույր Հայրիկյանը:

Համոզված ենք, որ ընթերցողին հայտնություն է սպասվում: Բանտերում Հայրիկյանի գրած բազմաթիվ բանաստեղծություններից ու երգերից վերցված այս փշրանքները ոչ միայն բացահայտում են Հայրիկյան մարդ-մարտիկի էությունը, այլեւ կարող են անկոտրում հավատի, հայրենասիրության եւ ազատասիրության դպրոց լինել:

Հ $\frac{4702080202}{807(01)-96}$ 96

ԳԴՄ 84Հ7-5

Copyright © Paruyr Hayrikyan, 1996
Copyright © "UNSD" publishing house, 1996
All rights reserved

© «ԱԻՄ» հրատարակչություն, 1996



# Երգեր

Աշխարհահռչակ «The Wall Street Journal» թերթը 1990թ մարտի 15-ին գրում է. «Հայրիկյանը ազգային խորհրդանիշ է նաև իր երգերով: Սովետական դատարաններից մեկում իր վերջին խոսքում նա ասում է.

-Դուք կարող եք սպանել ինձ, բայց իմ մահից հետո դուք պետք է պայքարեք իմ երգերի դեմ:

Հայրիկյանը ճիշտ դուրս եկավ, հայերը երգում են նրա երգերը»:

**4**

# ՀԱՅ ԵՆՔ ՄԵՆՔ

*Խոսք եւ երաժշտ.՝ Պ. Հայրիկյանի*




Հայ ենք մենք, հայ ենք մենք, հայ, հայ, հայ,
Լինենք զինվոր՝ երկրին պաշտպան,
**ԿՐԿՆԵՐԳ.- Մենք ծնվել ենք որպես հայ եւ կմեռնենք հայ,**
**Հայ ենք մենք, հայ ենք մենք, հայ, հայ, հայ:**

Հայ ենք մենք, հայ ենք մենք, հայ, հայ, հայ
Արցունք, արյուն էր մեր ճամփան,
**ԿՐԿՆԵՐԳ.- Խփվեցինք, բայց չընկճվեցինք, մնացինք հավետ,**
**Հայ ենք մենք, հայ ենք մենք, հայ, հայ, հայ:**

Հայ ենք մենք, հայ ենք մենք, հայ, հայ, հայ,
Հույս, հավատ, սեր եւ հարություն:
**ԿՐԿՆԵՐԳ.- Հայ ենք մենք, անպարտ ենք մենք՝ մեր թշնամյաց ահ,**
**Հայ ենք մենք, հայ ենք մենք, հայ, հայ, հայ:**

*Երեւանի ՊՄԿ-ի բանտ, 1970թ.*

# ՄԵԶ ԱՐԾԻՎՆԵՐ

*Խոսք՝ Ստ. Զատիկյանի*
*Երաժշտ.՝ Պ. Հայրիկյանի*



Մեզ արծիվներ հայ լեռների,
Քաջորդիներ Հայկա ցեղի,
Տանք մեր միտքը, կյանքն ու ոգին
Մեր տառապած հայրենիքին:

Մեր պապերի հողն հնամյա,
Հայոց ազգի ոգին անմահ,
Հայոց ազգի հանճարն հզոր
Կանչում են մեզ գիշեր ու զոր:

Երդվում ենք քեզ, մայր հայրենիք,
Երդվում են քեզ, մայր, քո որդիք,
Երդվում ենք քեզ, մայր Հայաստան
Լուծել վրեժի սրբազան:

*Մորդովիայի 19-րդ ճամբար.1970 թ., հուլիս*

**6**

# ՄԻ՞ԹԵ ՎԵՐՋԻՆ ՊՈԵՏՆ ԵՄ ԵՍ

*Խոսք՝ Վ. Տերյանի*
*Երաժշտ.՝ Պ. Հայրիկյանի*




Մի՞թե վերջին պոետն եմ ես,
Վերջին երգիչն իմ երկրի...
Մահն է արդյոք, թե նի՞նջը քեզ
Պատել պայծառ Նաիրի:

Վտարանդի, երկրում աղոտ,
Լուսե՜ղ, քեզ եմ երազում,
Եվ հնչում է որպես աղոթք,
Արքայական քո լեզուն:

Հնչում է միշտ խոր ու պայծառ,
Եվ խոցում է եւ այրում.
Արդյոք բոցե վարդե՞րդ են վառ,
Թե՞ վերքերն իմ հրահրում:

Ահով ահա կանչում եմ քեզ՝
Ցոլա՛, ցնորք Նաիրի.-
Մի՞թե վերջին __զինվորն__ (Պ.Հ.) եմ ես,
Վերջին __մարտիկն__ (Պ.Հ.) իմ երկրի...

***Մորդովիա , 1972թ.***

# ՁԻՆՎՈՐԻ ԱՂՈԹՔԸ

*Խոսք եւ երաժշտ.՝ Պ. Հայրիկյանի*



Բախտ անգութ, ինչու՞ ես ինձ հալածում,
Զինվորիս, ինչու՞ ես բանտում փակում,
Ես հայրենիքիս փրկության ելքն եմ փնտրում,
Իսկ դու ինձ անափ օվկիանն ես նետում:

Սուրբ Աստված, ո՞րն է մեղքը քո որդու,
Եվ ի՞նչում մեղաչանքը իմ հոգու,
Թե մեղավոր եմ, գեթ առայժմ գթա ինձ,
Թող կռվեմ եւ կռվելով տամ հոգիս:

*Երեւան, ՊԱԿ-ի բանտ, 1974թ.*

8

# ԱՆԿԱԽԱԿԱՆՆԵՐԻ ՕՐՀՆԵՐԳԸ

*Խոսք և երաժշտ.՝ Պ. Հայրիկյանի*



Մենք ուզում ենք, որ անկախ լինի Հայքը,
Որ ոչ մի հայ էլ պանդուխտ չլինի,
Հայրենիքի սիրով վառում ենք ահը,
Որ երկիրը մեր միշտ ազատ լինի:
**ԿՐԿՆԵՐԳ.- Դե՛, եկեք, եղբայրներ, մենք միանանք,**
**Միասնությամբ ենք անպարտ մենք,**
**Հայրենյաց սուրբ սիրով մենք վեհանանք,**
**Հայաստանն ազատենք:**

Ամեն մի դար ունի իր նորույթները
Եվ ամեն դար նոր սրբեր է կերտում,
Բայց հավերժ սուրբ են ազգ, հայրենիքը,
Եվ մենք նրանց ենք զինվորագրվում:
**ԿՐԿՆԵՐԳ.- Դե՛, եկեք, եղբայրներ, մենք միանանք...**

*ՊԱԿ-ի բանտ, 1974 թ.*

# ՏԽՈՒՐ Է ՄԵՆԱԿ ԱՅՍ ԲԱՆՏՈՒՄ

*Խոսք եւ երաժշտ.՝ Պ. Հայրիկյանի*



Տխուր է մենակ այս բանտում,
Ցավ ու կսկիծ է ամեն օր,
Սիրտս փղձկում է, հեկեկում,
Գերված եմ հիմա ու անզոր:

Էլ մի մորմոքա, իմ անգին,
Այս է հավիտյան իմ ուղին,
Քանի գերի է հայրենին,
Քոնը չի լինի իմ հոգին:

Թող սիրտը երբեք քո չլա,
Եվ քո աչերը չտխրեն,
Թե քեզ չի այրում նույն վիշտը,
Կապող հուշերը կխամրեն:

Տխուր է մենակ այս բանտում,
Ցավ ու կսկիծ է ամեն օր,
Սիրտս փղձկում է, հեկեկում,
Գերված եմ հիմա ու անզոր:

*Երևանի ՊԱԿ-ի բանտ, 1974 թ.*

# ԳԵՐՎԱԾ ԶԻՆՎՈՐԻ ԵՐԳԸ

*Խոսք և երաժշտ.՝ Պ. Հայրիկյանի*




Մենք՝ ազգի զինվորներ, գերի ենք այս հեռվում,
Եվ կարոտը հայրենյաց մեր սրտերն է տանջում:
**ԿՐԿՆԵՐԳ.- Մենք գերված ենք, աքսորված ենք,**
**Բայց երկիր, դու ազատ կլինես:**

Թեեւ մենք, հայրենիք, հեռվում ենք եւ տկար,
Չի դիմանա քո շնչին ցուրտ հյուսիսը օտար:
**ԿՐԿՆԵՐԳ.- Մենք գերված ենք, աքսորված ենք,**
**Բայց երկիր, դու ազատ կլինես:**

Ոչ լկտի բռնությունն ու ոչ էլ ուժն են նոր,
Դու քո սիրով եւ ոգով կհաղթես եւ այսօր:
**ԿՐԿՆԵՐԳ.- Մենք գերված ենք, աքսորված ենք,**
**Բայց, երկիր, դու ազատ կլինես:**
**Հայաստան դու ազատ կլինես:**

***Մորդովիայի 19-րդ ճամբարի պատժախուց,***
***1973 թ., մարտ***

# ՊԱՏԺԱԽՑՈՒՄ

*Խոսք եւ երաժշտ.՝ Պ. Հայրիկյանի*



Պատժախցում, չորս պատի մեջ
Քայլում եմ ետառաջ ես անդադար,
Ցուրտն է ջերմում, քաղցը սնում,
Եվ խավարը լուսավորում ինձ արդ,
***ԿՐԿՆԵՐԳ.*- Բայց մի տրտմիր ու մի տխրիր,**
**Սիրտ իմ, հպարտ երգիր:**

Օ, Հայրենիք, թեեւ հիմա
Ես Յուսիսի դառնությունն եմ ըմպում,
Բայց ամեն ցավ եւ ամեն վիշտ
Լոկ երանություն են ինձ պարգեւում:
***ԿՐԿՆԵՐԳ.*- Ո՜հ, հանուն քեզ շղթա կրել**
**Յաճույք է եւ պատիվ:**

***Մորդովիայի 17-րդ ճամբար, 1976թ.***

# ԿՐԿԻՆ ՈՏՔԻ

*Խոսք եւ երաժշտ.՝ Պ. Չայրիկյանի*




Կրկին ոտքի, կրկին ոտքի, հայորդիներ,
Քայլենք գալիք դարերն ի վեր, դարերն ի վեր,
*ԿՐԿՆԵՐԳ.*- **Պարզենք դրոշն հայոց փառքի, հայոց փառքի,**
**Որպես զինվոր անհաղթ ոգու եւ կուռ կամքի:**
Կրկին ոտքի, կրկին ոտքի, հայորդիներ,
Մեր սերը՝ սուրբ, ոգին՝ անպարտ, եվ աներեր,
*ԿՐԿՆԵՐԳ.*- **Կանչում են մեզ, կոչում մարտի, կոչում մարտի,**
**Որ Հայաստան երկիրն Աստծո հավերժ ապրի:**
Կրկին ոտքի, կրկին ոտքի, հայորդիներ,
Հավերժ է, կա հայոց ոգին՝ սուրբ սերը մեր,
*ԿՐԿՆԵՐԳ.*- **Պայքարն է լոկ վճիռը մեր, վճիռը մեր,**
**Եվ այդ կռվում՝ մենք անվարան ու անվեհեր:**
Մեր մեջ է Նա, արարչաստեղծ հայոց սրտում,
Խորհուրդը մեծ ճշմարտության, անհուն բարու,
*ԿՐԿՆԵՐԳ.*- **Աստված մեզ հետ է, եւ օրհնյալ է մեր ուղին,**
**Եվ կհաղթենք, որքան էլ նենգ է թշնամին:**

*Սորդոլիսայի 19-րդ ճամբար, 1970թ.*

# ՀԱՐՍԱՆԵԿԱՆ ՕՐՀՆԵՐԳ

*Խօսք եւ երաժշտ.՝ Պ. Զայրիկյանի*



Սեւ օրեր չըտեսնեք,միշտ ուրախ լինեք,
Միշտ իրար հետ լինեք:
*ԿՐԿՆԵՐԳ.*- **Թե մեզ էլ մեկ-մեկ հիշեք ու տխրեք,**
**Կենացներ խմեք,**
**Գինով թասը՝ ձեզ, դառնությունը՝ մեզ.**
**Ձեր ուրախությունն էլ մեզ...**
Մի բարձի ծերանաք, անզավակ չլինեք,
Երջանիկ լինեք:
*ԿՐԿՆԵՐԳ.*- **Թե մեզ էլ մեկ-մեկ հիշեք ու տխրեք...**

*Երեւանի ՊԱԿ-ի բանտ, 1976թ.*

# ՁՈՆ

Խոսք- Դ. Վարուժանի
Երաժշտ.- Պ. Հայրիկյանի



Եղեգնյա գըրչով երգեցի փառքեր.
Լքեզի ընծա՛, իմ հայրենիք!
Սոսյաց անտառեն էի գայն կըտրեր...
-Քեզի ընծա՛, հին հայրենիք-
**ԿՐԿՆԵՐԳ.- Եղեգնյա գըրչով երգեցի քուրմեր.**
**Ընդ եղեգան փող լու՛յս ելաներ:**

Եղեգնյա գըրչով երգեցի կարոտ.
- Ձեզի ընծա՛, հայ պանդուխտներ-

Ան տարաշխարհիկ բույսի մ՚էր ծըղոտ...
- Ձեզի ընծա՛, հեզ պանդուխտներ-
***ԿՐԿՆԵՐԳ.*** **- Եղեգնյա գըրչով երգեցի հարսեր.**
**Ընդ եղեգան փող ո՛ղբ ելաներ:**

Եղեգնյա գըրչով երգեցի արյուն.
-Ձեզի ընծա՛, սուրի զոհեր-
Ան ծլած էր մոխրի մեջ իբրեւ կընյուն...
-Ձեզի ընծա՛, կրակի զոհեր-
***ԿՐԿՆԵՐԳ.*** **- Եղեգնյա գըրչով երգեցի վերքեր.**
**Ընդ եղեգան փող սի՛րտս ելաներ:**

Եղեգնյա գըրչով որբ տունս երգեցի.
- Քեզի ընծա՛, հայր ալեհեր-
Յամքած աղբյուրեն մեր զայն հոտեցի...
- Քեզի ընծա՛, մայր կարեւեր-
***ԿՐԿՆԵՐԳ.*** **- Եղեգնյա գըրչով օջախս երգեցի.**
**Ընդ եղեգան փող ծու՛խ ելաներ:**

Ու պայքա՛ր, պայքա՛ր, պայքա՛ր երգեցի.
-Ձեզի ընծա՛, հայ մարտիկներ-
Գրիչս եղավ անթրոց սըրտերու հնոցի...
- Ձեզի ընծա՛, քաջ մարտիկներ-
***ԿՐԿՆԵՐԳ.*** **- Եղեգնյա գըրչով վըրեժ երգեցի.**
**Ընդ եղեգան փող բո՛ց ելաներ:**

***ՊԱԿ-ի բանտ, 1974թ.***



# Բանաստեղծություններ

Մեր ազգը մի լավ բանաստեղծ կորցրեց,
Կորցրեց մի լավ երգիչ,
Լավ ճշմարտությունների խոսնակ կորցրած
Եվ կյանք վտարանդված պատանին:

Սակայն բանտերն այս՝ ի մի բերված
Միջնադարյան են դեռևս.
Մեր ազգը այսօր գիտակից շատ է,
Սրանից հետո՞ էլ ինչ...

Պարույր Հայրիկյան

*Կա միայն մի խնդություն*
*Արժան ու հավերժ.*
*Լինել անգին եւ անփոփ,*
*Չարչարվել անվերջ:*
***Վ. Տերյան***

Կամ դու խելագար մի նվիրումով
Սպառելու ես կրակը ներսիդ.
Եվ եզրագիծդ նմանվելու է
Լույս չտարածող, ընդմիշտ սպառված
Ճրագի բախտին.
Եվ կամ մոռացած ամեն գործ ու բան
Կռիվ պիտ մտնես քո ճամփով անցնող,
Արժող, չարժեցող համբակների հետ՝
Նույնիսկ այն դեպքում, երբ նրանք տարված
Իրենց մեղկելի գործերի բույրով,
Քեզ չեն նկատել,
Որպես եւ գայլը չի տեսնում բնավ հավ ու նապաստակ,
Երբ նկատել է հոտը ոչխարի:

Եվ կամ քո ուղով ուխտի գնալիս՝
Անտես անելով նպատակդ վես՝
Աստծուն հասնելու, քո աղոթքներով
Վերմերձենալու ձգտումը սրբին,
Ոտքիդ տակ ընկած քարերն ես անվերջ
Դես-դեն նետելով ուղի հարթելու
Նույն նպատակով եկողանց համար...
Ու այսպես երկար, անվերջանալի...
Եվ եթե մանր գործերին տրված
Դու քեզ չսպառես դեռ ճամփիդ կեսին,
Երբ.էլ որ հասնի մայրամուտը քո,
Տեսնելու ես, որ ճամփին ես դու դեռ,
Որ ուխտի օրը վաղուց է անցել,
Որ դու թաթախված ճղճիմ գործերում

Մանրացրել եւ քեզ այդ ամենի պես
Եվ ընդմիշտ դարձել
ՄԵԾ ՈՂՆՉՈՒԹՅՈՒՆ...

*1976թ.*

Այս ճամփով շատ շատերն են անցել,
Օրհնվել ու անիծվել է այս ճամփան.
Այս ճամփին շատ մայրեր են լացել,
Սպասում ու կարոտ է այս ճամփան:

*1974թ.*

Այսօրվա մեկը
Վաղվա հազարն է,
Վաղվա հազարը
Տխրահամբավ:

Պահում ենք մեկը,
Խնայում մեկը,
Հազարն ենք տալու,
Մնալու անքավ...

*1974թ., ՊՄՆ, Երեւան*

Ես ու դու ամպեր լինեինք,
Երկնքում ազատ լինեինք,
Կապույտում ծերմակ սահելով՝
Փնտրեինք, իրար գտնեինք:

Տարանուն, տարալիցք հպվեինք,
Նույնահուն, նույնասիրտ՝ ձուլվեինք,
Չուլումը բեղուն լիներ.
Երկունքը որոտ լիներ.

Ծնունդը կայծակ լիներ.
Կայծակը երկրին տրվեր,
Երկիրը գոնե հմայվեր,
Կայծակը տրվեր-անցներ,
Երկիրն անտարբեր չլիներ:

Մեր ամպը ցավից կծկվեր,
Վշտից արցունքի վերածվեր,
Արցունքը անձրեւը լիներ,
Ու կրկին երկրին հասնելով՝
Շանթի շիրիմը որոներ:
Որոներ, որոներ, չգտներ
Ու ինքն էլ երկրին տրվեր...

*1975թ., թիվ 19 ճամբարի բանտ*

⊹⊹⊹⊹

Ու՞մ ասեմ՝ անուշ, ու՞մ ասեմ անգին,
Ու՞մ վարսերը թուխ սանրեմ մատներով
Եվ ում ականջին ցածր ու քախծալի
Խոսքեր շշնջամ, շշնջամ սիրով:
Խցիս մութ պատե՞րն ինձ պիտի լսեն,
Թե լուսամուտիս վանդակը երկաթ,
Գորշ լաթերի՞ հետ հույզերս կիսեմ,
Թե տխուր լուսնի՝ ամպոտ ու գունատ:

*1974թ., ՊԱԿ-ի բանտ*

⊹⊹⊹⊹

Մի քիչ արյուն, մի քիչ արցունք,
Մի քիչ ցասում, մի քիչ լաց
Եվ կկանգնեն արդեն բազումք
Մահվան դիմաց գրկաբաց:

*20 հունիսի, 1974թ.*

Թե բանտն էր լինելու իմ տունը,
Թե փշալարն ինձ ընկեր,
Ինչի՞ս էր պետք այս էությունը
Եվ այս սերը սրտավեր:

Բանտերից չեն փախչում, իմն է այս՝
Կարոտից, քաղցից ու ցրտից.
Վերուստ շնորհված դառնությունն այս
Իմն է եւ քաղցր ամենից:

Եվ դարձած ընդվզում ու բողոք
Ճակատագրից չեմ բարբաջում
Փառքդ շատ, Տեր, ես հլու եմ, լոկ
Սիրտս է պոռթկում, հեծեծում:

Ինչու՞ ինձ կրակ սիրտ տվեցիր,
Ինչու՞ այն լցրիր սիրով,
Ինչու՞ մաքուր երազ տվեցիր
Ու հետո փոխեցիր կարոտով:

Եվ ինչու՞ ինձ սիրով գինովցած
Լեզու ու շուրթեր տվեցիր,
Դե ասա, ինչպես շշունջ դարձած
Յուշերս սանձեմ ցանուցիր:

*1974թ.*

Անբասիր դժվար է լինել,
Անբասիր պետք է ծնվել:
Լույսի պես ջերմ լինել
Ու նաեւ ջինջ լինել,
Անհնար է, ցնորք.
Կրակից պետք է ծնված,
Արեւից՝ սերված լինել:

*1975թ.*

Կյանքս լիքը չէ, ես եմ լեցուն
Եվ ոչ թե կյանքն է ինձ լիացնում,
Այլ ես եմ մաս-մաս տրվելով նրան
Չարը բարի դարձնում, խավարը՝ լույս,
Յյուսիսը՝ հարավ եւ անկումս՝ հույս:

Մեր ազգը մի լավ բանաստեղծ կորցրեց,
Կորցրեց մի լավ երգիչ,
Լավ ճարտարագետ՝ «ինժեներ» կոչված
Եվ կամ վաստակած ուսուցիչ:

Սակայն լավերն այս ի մի բերված
Միջակություն են՝ ոչինչ...
Մեր ազգը այսօր զինվոր շահեց:
Սրանից վսեմ էլ ի՞նչ...

*1975թ.*

Մենությամբ խորտակված, ընկած,
Դարձած անօգնական մի այր,
Մենության խցում սթափված
Խորհում եմ մենակ, վշտահար:
Եվ ինչպե՞ս եղավ այս ամենը,
Թե՞ խակ եմ, անփորձ մի մանուկ,
Լքեցին համարյա ամենը.
Ո՞վ գիտի, որքան եմ տաղտուկ:
Իզուր էի ինձ համոզում,
Թե նրանք փոքր են, մեղկ ու թույլ.
Յրճվում են, ուրախ «կյանք անում»,
Իսկ ես, թե՝ թշվառներ են թույլ:

Այդ ո՞վ առայսօր նրանցից
Ղեզեց մի երկու տող թեկուզ,
Թե՝ հոգնել եմ ես պայքարից,
Թե՝ վատն եմ, դարձել եմ անուժ:
Ոչ, սխալ ես դու,- ասացին
Կամ՝ հեռանկար չենք տեսնում:
Ապագան վկա կարգեցին,
Թեեւ անցյալն են մոռանում:
Այդքանը սխալակա՞ն. երբեք,
Այդ ես եմ անհույս հեռացող,
Եվ սակայն հավատովս անբեկ
Երկյուղն եմ ամբոխի ուրացող...

*17.03.77թ.*

Մարմնով շրջված ներքեւ, հագուստներն հագին,
Հարթակին պառկած է մի գերված զինվոր:
Քնած է, դեմքը՝ խաչված ձեռքերին,
Իր խցի խավարում՝ լքված, մենավոր:

Երեկվա զինվորն արդ կալանավոր է,
Անշարժ ու լուռ է, հանգիստ այնպես,
Հայրենի լեռներում քնած սարվոր է,
Պատժախուց նետված գերի չէ կարծես:

Պատից կախ հարթակին այնպես ջերմ է փարվել,
Այդպես մանուկն է գրկում իր մորը,
-Բա՛նտ, ազատության մայրն ես միշտ եղել,
Եվ սիրում է քեզ կալանավորը:

*18.03.1977թ.*

Որպեսզի Մասիսն՝ հայության խորհուրդն հավիտենական,
Անշղթա, ազատ ու հայկյան լինի.
Որպեսզի երազ, անցյալ չդառնա մի ողջ հայրենիք,

Բաղձանք լոկ տխուր, արտասվաց աղբյուր Անին ու Վանը,
Չինքնավարանա արդ օտարացած Նախիջեւանը,
Ղարաբաղ կոչվող Արցախն երեկվա անվերջ չհեծծա,
Մենք պիտի թողնենք ամեն գործ ու բան,
Զինվորներ դառնանք.

Որպեսզի սփյուռք բառը դժնօրյա
Ընդմիշտ մոռացվի ու անէանա,
Հավետ վերանա վտանգն ուծացման,
Հայ կոչվեն ռո՛ւսա ու թո՛ւրքահայը,
Ախպար, տեղացի, նորեկ չլինի,
Հայը հայ երկրում անթախիծ ապրի,
Մենք պիտի ելնենք, չսպասենք վաղվան.

Որ չխեղճանա մի նոր Կոմիտաս,
Ու անգերեզման Չարենց չլինի,
Անցյալ, հուշ դառնան երեսունյոթը, քառասունինը,
Թամանյան կոչված բոթ թերակղզին,
Եղեռն սեւ բառը հավետ մոռացվի,
Որ Տեր-Զոր ապրած-փրկվածը նաեւ Սիբիր չտեսնի,
Չլինի երբեք ոչ մի հայ գերի՝ քաղկալանավոր,
Մենք պիտի բռունցք դառնանք հատուցման.

Որ հայրենիքը հարազատ լինի ամեն հայորդու,
Ամեն հայ՝ որդի,
Կարմիր կապույտի խնդիր չդրվի,
Կրոն, հավատամք եւ կամ գաղափար մեջտեղ չբերվի,
Որ տանն հայրենի լինեն հավասար
Կարմիր-կապույտն ու նարնջագույնը,
Գործը չափ լինի,
Մենք պիտի այսօր լինենք միաբան.

Եվ որ վերջապես լուծվի, վերանա
Հայկական կոչված հարցն ամոթալի,

Ու չերեփների կարիք չլինի
Օտարի եփած հարիսաներին,
Որպեսզի բացվի դուռը Մհերի,
Ու վերածնվող հայրենիքի հետ
Վեր հառնի կրկին նրա հաղթ ոգին,
Մենք պիտի ելնենք վստահ, անվարան

ԿԵՑՑԵ ԱԶԳԱՅԻՆ ՄԻԱՍՆՈՒԹՅՈՒՆԸ,
ԿԵՑՑԵ ԱՆԿԱԽ ՈՒ ԱԶԱՏ ՀԱՅԱՍՏԱՆ:

*15 մարտի, 1977թ., Մորդովիա,*
*19-րդ ճամբարի պատժախուց*

Քո սպասումը՝ անսահմանություն,
Ի՞նչ անեմ, քույրիկ, ինչո՞վ սփոփեմ,
Ես կամ, թե չկամ՝ ինքս էլ չգիտեմ,
Լրիվ դարձել եմ մի անհայտություն:

Մխիթարության խոսքեր չեմ գտնում,
Այս մղձավանջում ի՞նչ մխիթարանք,
Ամեն մի օրը պատուհաս, տքնանք,
Ամեն մի օրը երբ դեպի անկում:

*Նոյեմբեր, 1980թ., Պերմի բանտ*

Ու՞մ է հարկավոր բարբաջանքը քո,
Քո թախծից ձուլված երգը՝ ու՞մ:
Ինչու՞ ես ամեն հույզից ներքո
Նոր համաստեղություն փնտրում:

Գիշեր է հիմա, պառկիր, քնիր,
Մոռացիր աշխարհին անցյալ,
Մոռացել են քեզ, դու էլ քաջ եղիր,
Հեռացի՛ր, խեղճ հանգուցյալ:

Ու մի՛ շշնջա խոսքեր տրտում,
Մի՛ մերժիր, մի՛ հերքիր քեզ,
Գտել ես հիմա, ինչ որ փնտրում,
Որոնում էիր այդպես:

Կարող եմ եւ ես հասկանալ, ցավել,
Բարի կամենալ սրտանց,
Բայց վերջաբանն այս դու կանխատեսել,
Գուվերգել էիր անսանձ:

Անցած-գնացած մյուս բոլորից
Լավը չես, ոչ էլ՝ ավելին,
Բայց վեհ է վախճանդ, սփոփիչ՝
Մերձենում ես հին քաջերին:

*1981թ., ՊԱԿ-ի բանտ*

Ախր ինչու՞ այսպես անհորիզոն ես, կյանք,
Եվ ինչու՞ ես դնում ամեն ուղուս փականք,
Դու մինչեւ ե՞րբ պիտի փոթորկուն ծով լինես
Ու ամեն ափ հույսի խաբուսիկ ամպ դարձնես:

Հազարամյա ուղուց խոտորված ճամփորդ չեմ,
Եվ ոչ էլ ծովահեն՝ խելահեղ, ինքնիշխան,
Ինձ իմ սերն է ընկեր, ինքս ինձնից ու՞ր փախչեմ,
Եվ ինչու՞ հեռանամ, երբ փնտրում եմ կայան:

*25.11.1980թ.*

Դեմ չեմ կյանքում մաքառելուն ու տքնանքին,
Դեմ չեմ հանուն գաղափարի նոր երկունքի,
Անհանգրվան, տաժանակիր, գերի լինել:

Սակայն երբեք չեմ կամեցել իմ ողջ կյանքում
Տառապանքի ու մաքառման հրում լինել,
Սակայն երբեք չեմ կամեցել իմ ողջ կյանքը
Տառապանք ու տքնանք դարձնել,
Ապրել, շնչել բոլորի պես,
Ամենքի պես սիրել, զգալ ու կարոտել,
Սակայն անվերջ հեգ տրոփող իմ սրտի պես
Փակված լինել, զրկված լինել,
Անմխիթար, անօգնական,
Թեւ՝ առույգ ու կենդանի,
Ողջ-ողջ բանտում թաղված լինել:
Չեմ կամեցել...

*10.05.1981թ.*

Մարդկային կյանքը հանգստավայր չէ,
Հանգստյան ժամ չէ եւ ոչ էլ օր,
Եթե իրավ ես՝ կյանքդ տքնանք է
Եվ ամեն տարիդ պայքարի օր:

*14.06.87 թ.*

Մենք իրար հետ երազեցինք
Ու կերտեցինք հրաշքներ,
Ճակատագիրը ծիծաղեց,
Կյանքը թողեց փշրանքներ:
Հիմա կրկին ինքս ինձ գտած,
Նոր հրաշքներ եմ փնտրում,
Իսկ դուք՝ դաժան իմ ընկերներ,
Փշրանքնե՞րս եք տրորում:

*21.09.1987թ.*

Ծիծեռնակ կա, որ գարուն է բերում
Եվ կա ծիծեռնակ, որ անհոգ բազմած
Գարնան ոսկելույս արևի շողին,
Գարնան հետ գալով գարուն է երգում:

Ծիծեռնակ կա, որ գարուն է բերում,
Ծիծառ էլ, որին գարունն է բերում...

*հուլիս, 1988թ.*

Մեր երախտագիտությունն ենք հայտնում բժիշկ Րաֆֆի Շէւորգյա-նին՝ գրքի տպագրության ծախսերը հոգալու համար։

Գրական-երաժշտական հրատարակություն
Պարույր Հայրիկյան
Երգեր, բանաստեղծություններ

Երաժշտական խմբագիրներ՝ Ալեքսանդր Սարգսյան
Կարինե Կարապետյան
Խմբագիր՝ Սուսաննա Գրիգորյան
Սրբագրիչ՝ Սոսի Սուրենյան
Շապիկի ձեւավորումը՝ Սեթ Կուռազյանի
Ձեւավորումը՝ Ռուբեն Վարդանյանի
Համակարգչային շարվածքը՝ Անահիտ Կարապետյանի

Գինը՝ պայմանագրային

Դուք լացի սովոր եվ հանուն լացի
Պատրաստ եք ողջ-ողջ ինձ հրին հանձնել,
Կենդանի այրել, իսկ հետո ողբալ,
Հերոսի պատվին կենացներ ասել:

Ձեզ հերոս պետք չէ՝ կենդանի, գործուն,
Հերոսները ձեզ մահացած են պետք:

*11 մարտի, 1988թ.*

Այս տառապանքը ո՞նց պիտի տանես,
Այս այրող ցավին ինչպե՞ս դիմանաս,
Դու իմ դժբախտ սեր, իմ կորչող երազ,
Ի՞նչ պիտի անես, որ չխենթանաս:
Մի Աստվածային շնորհ է սերը,
Բայց քեզ պատժի պես շղթայակապեց,
Անեծք եմ, ասես, եւ մեր հուշերը՝
Թախծանուշ տանջանք՝ չսպառվող անվերջ:
Էլ ինձ չեն լսում շուրթերս ու հոգիս,
Հույսը լքել է սիրտս հեծեծող,
Ուզում եմ ասել՝ լավ է ամեն ինչ,
Բայց լեզուս համր է, հոգիս հեծեծող:
- Դու կդիմանա՞ս այս տանջանքներին:
- Այո, թերեւս, բայց իմաստ ունի՞,
Երբ մենք զատված ենք, միայնակ, թերի
Այս ճանապարհին անվերջանալի:

*11 ապրիլի, 1988թ., Երեւանի Պակի բանտ*

Իմ վերադարձը դուք ողջունեցիք
Անորոշությամբ ու կասկածներով.
Մի քանի վայրկյան Նիրհից զարթնեցիք
Ու համակվեցիք անհայտ տագնապով:
Քաղքենիացած ձեր հոգիները
Թռիչք ու ճախրում անդարձ ուրացած,

Չէին ընդունում, որ իմ թեւերը
Կան, եւ թռիչքը իղձս է չլքված:
Դուք արագությամբ գարշահոտության,
Իմ շուրջը լցրիք կեղտ ու մեղկություն՝
Ենթագիտությամբ մի դահճապատկան,
Տենչալով բերել հուսահատություն:
Քաղքենիացնել, խառնել մեղկության
Ու թշվառության ձեր միությանը,
Որ դարձել է արդ ձեր երանության
Ու խիզախ տեսքի վերջին սահմանը:
Չկարողացաք եւ հուսահատված
Կկուներ դարձաք՝ ինքնաբավ հավերժ,
Բայց նեխությունը ձեր հայտնաբերած
Ձեզնից է գալիս, ձեզնից՝ ինքնամերժ...

*մայիս-հունիս, 1988թ.*

* * *

Ես սպասելու ցանկություն չունեմ,
Եվ ձեր խաղերը ինձ չեն գրավում,
Պահեք դրանք ձեզ, ես իմը գիտեմ,
Եվ բանտի շունչը ինձ խորթ չի թվում:
Ինչպես բռնեցիք անբարշտորեն,
Այդպես էլ պահեք ձեր բիրտ աշխարհում,
Ես ազատ եմ միշտ, իմ հոգին՝ անսանձ
Տիեզերքում է անանց թեւածում:

*6 հուլիսի, 1988թ., Երեւանի ՊԱԿ-ի բանտ*

* * *

### ՁՈՆ ՄԱՐՏԻԿԻՆ

*Եղեգնյա գրչով երգեցի հարսներ,*
*Ընդ եղեգան փող ծուխ ելանէր...*

Ես քո հարճը լինեմ,
Քո ստրուկը լինեմ,
Միայն քոնը լինեմ,
Միայն քոնը լինեմ:

Չիշեմ, արցունք թափեմ,
Չիշեմ, Աստված կանչեմ,
Չիշեմ, եղեռն երգեմ,
Բայց թե քոնը լինեմ:

Վիշտդ իմ վիշտն անեմ,
Ողբդ իմ սիրտն անեմ,
Լացեմ ու ախ քաշեմ,
Ախ, բայց քոնը լինեմ:

Անվերջ մենակ մնամ,
Սիրուդ պապակ մնամ,
Կարոտից խենթանամ,
Բայց թե քոնը մնամ:

Մրսեմ, շունչդ զգամ,
Ցավեմ, ցավերն հաղթող
Չոգուդ շոյանքն զգամ,
Զորանամ, զորանամ:

Չեռանաս, քեզ օրհնեմ,
Ուղիդ փառաբանեմ,
Լքումդ խնկարկեմ,
Քեզ համար աղոթեմ:

Մոռացումդ պաշտեմ,
Քո քրմուհին լինեմ,
Կուռքիդ զոհը լինեմ,
Միայն քոնը լինեմ:

Լացես, քեզ մայր լինեմ,
- Որդիս, ցավդ տանեմ:
Տխրես, քեզ քույր լինեմ,
Ու վիշտդ փարատեմ:

Չոգնես, ընկեր լինեմ,
Չավետ քեզ հետ լինեմ,
Բան է, թե սուգ բերես,
Սեւով քոնը լինեմ...

1975 թ. Մորդովիա, 3-րդ քաղճամբար

ՏԵՐՅԱՆԻ ՀԵՏ (ՊԱՏԺԱՌՑՈՒՄ)

«Գարունը այնքան ծաղիկ է վառել»,
Փշալարերն են ծյունից ազատվել.
«Գարունը այնպես պայծառ է կրկին»,
Գարունը այստեղ խավար է, տրտմին.
«Ուզում եմ մեկին քնքշորեն սիրել»,
Ուժ չունեմ, անգամ չեմ կարող սիրել.
«Ուզում եմ անուշ փայփայել մեկին»,
Ախ, լիներ մեկը, շոյեր իմ հոգին:

*22 մարտի, 1977թ.*

Ձյան փաթիլի պես փխրուն,
Ջրի կաթիլի պես զուլալ,
Երազներիս նման մոտիկ,
Երազներիս նման անհաս
Մոմի լույսի նման թովիչ
Նրա կրակի պես հաստատ
Օդի նման դու աննկատ,
Օդի նման էլ անհրաժեշտ
Այդ որտեղի՞ց ինձ մոտ եկար
Ու տիրեցիր ինձ այդպես հեշտ:

Քանի՞ անգամ ներել
Եվ քանիսի՞ն ներել
Եվ մինչեւ ե՞րբ ներել
Ներել, ներել, ներել ...

Ու թե շարունակեմ
Այսպես ներել, ներել,
Հետո արդյո՞ք կարող եմ
Ինքս ինձ էլ ներել ...

*1976 թ., Մարգախա*

**Title:** ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ԵՐԳԵՐ (ԵՐԳԵՐ ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ)

**Creator:** Պարույր Հայրիկյան

**Rights:** c.weniger@treventus.com

**Source:** Kavaldjian-Kostueme-Einlage.zip

CUSTOM

**Title:** ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ԵՐԳԵՐ (ԵՐԳԵՐ ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ)